

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

Քրիստոսի սուրբ Հարության ավետիսը վերստին լուսավորում է մարդկային աշխարհը և պայծառացնում մեր բոլորիս հույսը, մեծ հույսը՝ ձերբազատվելու մեղքի ու մահվան կապանքներից, մեծ հույսը մեր հոգիների փրկության:

Զի «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց»:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, այս լույս ավետիսով ողջունում ենք Ձերդ Սրբազնությանը և հղում Մեր օրհնանքը թեմիդ եկեղեցյաց ուխտապահ հոգևոր սպասավորներին, թեմական և համայնքային վարչությանց, տիկնանց և երիտասարդաց հանձնախմբերի և դպրաց դասերի եկեղեցաշեն անդամներին և համայն մեր հավատացյալ զավակաց, ջերմագին մաղթանքով, որ բոլորը ձեռք-ձեռքի տված, Ձերդ Սրբազնության հովանու ներքո սիրով միաբանած՝ համերաշխորեն գործեն հառավել շինություն և ծաղկումն թեմիդ հոգևոր, կրթական և մշակութային կյանքի:

Նաև սուրբ Հարության շնորհներով թող առավել աճի սերը և բարի կամեցողությունը մարդկանց ու ազգությունների միջև և խաղաղ գործակցությունը պետությունների:

«Ամենայն ինչ ձեր սիրով լինիցի» (Ա Կորնթ. ԺԶ 15): «Քանզի ամենեքին որդիք Աստուծոյ էք՝ հաւատովք ի Յիսուս Քրիստոս» (Գաղատ. Գ 26). ամեն:

**ՎԱԶԳԵՆ Ա**
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվել են ամենաջերմ և հարգալից զգացմունքներով լեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ Հայ Եկեղեցու նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց վանական կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված շնորհավորականների համար: